Ինչպե՞ս վաստակել միավորներ

Բովանդակություն

Երբ դուք աշխատում և վճարում եք սոցիալական ապահովության հարկեր, ապա վաստակում եք սոցիալական ապահովության նպաստներ ստանալու իրավունքի միավորներ:	1
Հատուկ կանոններ որոշ աշխատանքների դեպքում	2
Որքա՞ն ժամանակ է պետք աշխատել, որպեսզի հավակնել սոցիալական ապահովության	2
Աշխատանքային գործունեության ոչ բոլոր տեսակներն են հաշվարկվում սոցիալական ապահովության նպաստների իրավասության համար	4
Համոզվեք, որ ձեր փաստաթղթերն անթերի են	4
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	5

Երբ դուք աշխատում և վճարում եք սոցիալական ապահովության հարկեր, ապա վաստակում եք սոցիալական ապահովության նպաստներ ստանալու իրավունքի միավորներ:

Սոցիալական ապահովության միավորների քանակի հաշվարկը հիմնվում է ձեր վաստակած եկամուտների վրա: Մենք օգտագործում ենք վաստակած եկամուտների և աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկությունները, որպեսզի որոշենք կենսաթոշակ, հաշմանդամության նպաստներ կամ ընտանիքի՝ կերակրողին կորցրած անձանց նպաստներ ստանալու ձեր իրավասությունը:

2018 թվականին ձեր վաստակած յուրաքանչյուր $1,320 ԱՄՆ դոլարի դիմաց դուք ստանում եք սոցիալական ապահովության մեկ միավոր, իսկ տարեկան առավելագույն միավորների քանակը չորսն է:

Ամեն տարի, միավորներ վաստակելու համար անհրաժեշտ եկամուտների քանակն աննշան բարձրանում է միջին եկամտի մակարդակի համեմատությամբ: Միավորները, որոնք դուք վաստակում եք, մուտքագրվում են ձեր սոցիալական ապահովության գրանցամատյանի մեջ՝ նույնիսկ աշխատավայրի փոփոխության կամ եկամուտների բացակայության դեպքում:

Հատուկ կանոններ որոշ աշխատանքների դեպքում

Գոյություն ունեն սոցիալական ապահովության հատուկ կանոններ, որոնք կիրառվում են որոշ աշխատանքների դեպքում:

Եթե զբաղվում եք անհատական ձեռնարկատիրությամբ, ապա ձեր վաստակած սոցիալական ապահովության միավորները նույնն են, ինչ աշխատող անձինը (մեկ միավոր՝ յուրաքանչյուր $1,320 ԱՄՆ դոլար զուտ եկամուտներ ստանալու դեպքում, սակայն ոչ ավելի, քան չորս միավորների սահմանաչափը՝ մեկ տարվա համար): Հատուկ կանոնները կիրառելի են, եթե ձեր զուտ տարեկան եկամուտները չեն գերազանցում $400 ԱՄՆ դոլարի սահմանաչափը: Լրացուցիչ տեղեկությունների համար ծանոթացե՛ք Եթե զբաղվում եք անհատական ձեռնարկատիրությամբ հրապարակմանը (Հրատարակություն No. 05-10022-AM) (Publication No. 05-10022-AM):

Եթե գտնվում եք զինվորական ծառայության մեջ, ապա ձեր վաստակած սոցիալական ապահովության միավորները նույնն են, ինչ աշխատող անձինը: Դուք կարող եք լրացուցիչ միավորներ վաստակել նաև որոշ այլ պայմանների առկայության դեպքում: Լրացուցիչ տեղեկությունների համար ծանոթացե՛ք *Ծառայությունը զինված ուժերում և սոցիալական ապահովությունը հրապարակմանը* (Հրատարակություն No. 05-10017) (Publication No. 05-10017):

Մենք ունենք հատուկ կանոններ նաև այլ աշխատանքներ կատարելու դեպքում հաշվարկվող միավորների վերաբերյալ: Այդ այլ աշխատանքերի թվում են՝:

- Տնային տնտեսություն վարելու աշխատանքները,
- Աշխատանքը ֆերմայում, կամ
- Աշխատանքը եկեղեցում կամ եկեղեցու կողմից վերահսկվող կազմակերպությունում, որը սոցիալական ապահովության հարկեր չի վճարում:

Զանգահարեք մեզ, եթե ունեք հարց ձեր աշխատանքով հաշվարկվող միավորների վերաբերյալ:

Որքա՞ն ժամանակ է պետք աշխատել, որպեսզի հավակնել սոցիալական ապահովության

Նպաստներ ստանալու իրավունք ձեռք բերելու միավորների քանակը կախված է ձեր տարիքից և նպաստի տեսակից:

Կենսաթոշակ

Որևէ անձ, որը ծնվել է 1929 թվականին և հետո, կենսաթոշակ ստանալու համար պետք է ունենա 10-ամյա աշխատանքային ստաժ (40 միավոր): Մինչև 1929 թվականը ծնված անձանց համար նվազ աշխատանքային ստաժ է պահանջվում:

Հաշմանդամության նպաստներ

Հաշմանդամության նպաստներ ստանալու անհրաժեշտ միավորների քանակը կախված է ձեր տարիքից և հաշմանդամություն ձեռք բերելու ամսաթվից:

- Եթե հաշմանդամություն եք ձեռք բերել մինչև 24 տարին լրանալը, ապա դուք, որպես կանոն, հաշմանդամություն ձեռք բերելուց երեք տարի առաջ ընկած ժամանակահատվածում պետք է ունենաք 1½ տարվա աշխատանքային փորձ (վեց միավոր):
- Եթե 24-ից 30 տարեկան եք, ապա, որպես կանոն, պետք է ձեր 21 տարին լրանալու և հաշմանդամություն ձեռք բերելու ժամանակահատվածի կեսի չափով միավորներ ունենաք:
- Եթե հաշմանդամ եք և ձեր 31 տարեկան տարին լրացել է, ապա, որպես կանոն, անհրաժեշտ է ունենալ ոչ պակաս, քան

20 միավոր՝ հաշմանդամություն ձեռք բերելու պահից 10 տարի առաջ ընկած ժամանակահատվածի համար: Հաջորդ աղյուսակում բերված են օրինակներ, թե որքան միավոր է անհրաժեշտ տարբեր տարիքից հաշմանդամություն ձեռք բերած անձանց: Այս աղյուսակը չի հաշվառում բոլոր հնարավոր իրավիճակները:

Հաշմանդամություն ձեռք բերելու տարիքը	Անհրաժեշտ միավորներ	Աշխատանքային ստաժը
31-ից 42	20	5
44	22	5 ½
46	24	6
48	26	6 ½
50	28	7
52	30	7 ½
54	32	8
56	34	8 ½
58	36	9
60	38	9 ½
62 և ավելի,	40	10

Կերակրողին կորցրած անձանց նպաստներ

Եթե մահացած անձն ունեցել է աշխատանքային փորձ և վճարել է սոցիալական ապահովության հարկեր, ապա նրա ընտանիքի որոշ անդամներ կարող են կերակրողին կորցրած անձանց նպաստներ ստանալու իրավունք ձեռք բերել: Կախված մահացածի տարիքից, իրավունք ձեռք բերելու համար մինչև 10 տարվա աշխատանքային փորձ է պահանջվում: Շատ երիտասարդ աշխատող կերակրողին կորցրած անձանց նպաստներ կարող են նշանակվել, եթե մահացած աշխատողը վերջին երեք տարում՝ մինչև մահն, աշխատել է 1½ տարի:

Կերակրողին կորցնելու կապակցությամբ սոցիալական ապահովության նպաստներ կարող է ստանալ:

- այրին կամ կողակիցը՝ լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքում, լրիվ նպաստների չափով կամ նվազեցված նպաստներ՝ 60 տարեկանից,
- հաշմանդամ այրին կամ կողակիցը՝ 50 տարեկանից,
- ցանկացած տարիքի այրին կամ կողակիցը՝ որի խնամքի տակ է մահացածի մինչև 16 տարեկան կամ հաշմանդամ երեխան, և որը ստանում է սոցիալական ապահովության նպաստներ,
- Ամուսնալուծված ամուսինները՝ որոշակի պայմանների առկայության դեպքում,
- 18 տարին չլրացած կամ մինչև 19 տարեկան չամուսնացած երեխաները, եթե նրանք ցերեկային տարրական կամ միջնակարգ դպրոցի աշակերտներ են: Որոշ դեպքերում, նպաստներ կարող են վճարվել նաև ձեր խորթ երեխաներին, թոռներին, խորթ թոռներին կամ որդեգրված երեխաներին,
- Մինչև 22 տարեկան հաշմանդամ երեխաները, որոնց հաշմանդամությունը պահպանվում է, կամ
- 62 տարին լրացած խնամառու ծնողները:

Խնդրում ենք դիմել մեզ, եթե հավելյալ տեղեկություններ են անհրաժեշտ ձեր ընտանիքի կարգավիճակի վերաբերյալ:

Medicare

Եթե լրացել է ձեր 65 տարին, ապա սոցիալական ապահովության ձեր վաստակած միավորները հաշվի է առնվելու նաև Medicare իրավասությունը գնահատելիս: Դուք կարող եք Medicare իրավասություն ունենալ ավելի վաղ տարիքում, եթե 24 ամիս կամ ավելի ժամանակահատվածում հաշմանդամության նպաստներ եք ստացել: Եթե անձիք, որոնք ունեն մշտական երիկամային անբավարարություն կամ սոցիալական ապահովության հաշմանդամության նպաստառու են՝ քանի որ ամիոտրոֆիկ կողմնային սկլերոզ (Լու Գերիգի հիվանդություն) ունեն, ապա

իրավասություն ունենալու համար նրանք ստիպված չեն լինի 24 ամիս սպասել: Ձեր խնամառուները կամ կերակրողին կորցրած անձիք կարող են Medicare-ի իրավունք ունենալ մինչև 65 տարին լրանալը ներառյալ, եթե հաշմանդամ են: Մշտական երիկամային անբավարարություն ունեցող անձինք, ովքեր տևական դիալիզի կամ երիկամի փոխպատվաստման կարիք ունեն, ցանկացած տարիքում կարող են Medicare-ի իրավունք ստանալ՝ հիմնվելով ամուսնու կամ ծնողների, ինչպես նաև սեփական եկամուտների վրա: Medicare-ի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություններ ստանալու համար կապվեք մեզ հետ և հարցրեք *Medicare հրապարակման մասին* (հրատարակություն No. 05-10043-AM) *Medicare* (Publication No. 05-10043-AM):

Աշխատանքային գործունեության ոչ բոլոր տեսակներն են հաշվարկվում սոցիալական ապահովության նպաստների իրավասության համար

Սոցիալական ապահովության համակարգի շահառու կարող են լինել աշխատանքային գործունեությամբ զբաղված ոչ բոլոր աշխատակիցները: Այդ աշխատակիցներից են:

- Դաշնային աշխատակիցների մեծամասնությունը, որոնք աշխատանքի են ընդունվել մինչև 1984 թվականը (1983 թվականի հունվարի 1-ից բոլոր դաշնային ծառայողները վճարել են Medicare հիվանդանոցային ապահովագրության սոցիալական ապահովության հարկը),
- երկաթուղու աշխատողները՝ ավելի քան 10 տարվա ծառայուղական ստաժով,
- պետական և տեղական իշխանության մարմինների որոշ աշխատակիցներ, որոնք որոշել են չմիանալ սոցիալական ապահովության համակարգին, կամ
- 21 տարին չլրացած երեխաները, որոնք կենցաղային աշխատանքներ են կատարում տանը՝ ծնողների համար (բացառությամբ 18 տարին լրացած երեխաների, որոնք աշխատում են ծնողների հիմնած գործատեղիում):

Համոզվեք, որ ձեր փաստաթղթերն անթերի են

Ամեն տարի, գործատուն սոցիալական ապահովություն է ուղարկում ձեր W-2 ձևաթղթի (աշխատավարձի և հարկային հայտարարագրի) պատճենը: Սոցիալական ապահովությունը համեմատում է ձեր անունը և սոցիալական ապահովագրության համարանիշը W-2-ի գրառումների հետ: W-2-ում նշված եկամուտները գրանցվում են ձեր ողջ կյանքի ընթացքում ստեղծած եկամուտների տեղեկագրում: Ձեր ողջ կյանքի ընթացքում ստեղծած եկամուտների տեղեկագիրը օգնում է մեզ հասկանալ, թե արդյո՞ք կարող եք ապագայում նպաստներ ստանալ և ինչքա՞ն կլինի նպաստի գումարը:

Սոցիալական ապահովության քարտի վրա նշված ձեր անունը և սոցիալական ապահովության համարանիշը պետք է համապատասխանեն գործատուի աշխատավարձի վճարման գրառումներին և W-2 ձևաթղթում նշված տեղեկություններին: Պաշտպանեք ձեր ապագա նպաստները՝ ապահովագրելով այդ երկու գրառումների ճշգրտությունը: Հայտնեք ձեր գործատուին, որ նրա հաշվառման փաստաթղթերում ձեր անունը և սոցիալական ապահովության համարանիշը ճիշտ չեն նշված: Եթե ձեր սոցիալական ապահովության քարտում անճշտություն կա, դիմեք սոցիալական ապահովության որևէ գրասենյակ:

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

Այեցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնեություն վարելու ամենահարմար եղանակը դա մեր՝ ***www.socialsecurity.gov*** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Նշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը) ՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնեությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (Ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Զանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ:

Securing today and tomorrow

Social Security Administration
Publication No. 05-10072-AM | January 2018
Ինչպե՞ս վաստակել միավորներ
How You Earn Credits (Armenian)
Produced and published at U.S. taxpayer expense
Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին: